

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 7
08.05. 2020 թ

1. ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի բանակից զորացրված, նախորդ տարիներին ավարտական ամփոփիչ ատեստավորումից անբավարար զնահատական ստացած, հարգելի պատճառով ավարտական ամփոփիչ ատեստավորմանը չներկայացած ուսանողներին, ավարտական ամփոփիչ ատեստավորմանը թույլատրելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի բանակից զորացրված, նախորդ տարիներին ավարտական ամփոփիչ ատեստավորումից անբավարար զնահատական ստացած, հարգելի պատճառով ավարտական ամփոփիչ ատեստավորմանը չներկայացած ուսանողներին թույլատրել մասնակցելու ավարտական ամփոփիչ ատեստավորմանը:

2. Հեռակա ուսուցման դեպարտամենտի 2018-2019 ուստարվա վարձավճարների պարտքեր ունեցող ուսանողների ուսման վարձավճարների վճարման ժամկետի վերանայման հարցի վերաբերյալ.

2019-20 ուստարի նոր փոխադրված և 2018-19 ուստարվա ուսման վարձավճարի պարտքեր ունեցող հեռակա ուսուցման դեպարտամենտի ուսանողների համար ուսման վարձավճարների պարտքերի մարման վերջնաժամկետ սահմանել 2020թ հունիսի 1-ը:


3. 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ մարտական գործույության մասնակից կամ մարտական հերթապահություն իրականացրած ուսանողների ուսման վարձավճարների զեղչերի սահմանման վերաբերյալ:

3.1. Ազրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի առկա ուսուցման «Ապրանքագիտություն և ապրանքի որակի փորձաքննություն» մասնագիտության վճարովի համակարգի 2016թ. ապրիլին քառօրյա պատերազմին մասնակցած 5-րդ կուրսի ուսանող Իշխան Ավետիքի Ամիրյանի համար սահմանել ուսման վարձի զեղչ 2019-20 ուստարվա 2-րդ կիսամյակի համար 50%-ի չափով:

3. 2. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի առկա ուսուցման ԲԺ 3 մասնագիտության վճարովի համակարգի 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած ուսանող Ղուկաս Գոռի Գրիգորյանի համար սահմանել ուսման վարձի զեղչ 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի համար 30%-ի չափով:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Վ.Է. ՌԻՌՈՒՏՅԱՆ

Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ